


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2013թ. հոկտեմբերին


/վերլուծություն/

2013թ. հոկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 18241 գործարքներ, որոնց քանակը 2013թ. սեպտեմբերի համեմատ աճել է 9.7%-ով, իսկ 2012թ. հոկտեմբերի համեմատ՝ 4.8%-ով:

2013թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4503 օտարման գործարքների 73.2%-ը կազմել են առուվաճառքները, 26.1%-ը՝ նվիրատվությունները և 0.7%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 44.0%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 42.2%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2013թ. հոկտեմբերին, 2013թ. սեպտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 11.5%-ով, իսկ 2012թ. հոկտեմբերի համեմատ նվազել՝ 1.1%-ով:

2013թ. հոկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 64.5%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2013թ. հոկտեմբերին, 2013թ. սեպտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 20.4%-ով, իսկ 2012թ. հոկտեմբերի համեմատ՝ 16.3%-ով:

2013թ. հոկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հոկտեմբեր 2012թ	հոկտեմբեր 2013թ.	սեպտեմբեր 2013թ.
Կենտրոն	419500	428000	428000
Արաբկիր	347000	356600	356600
Քանաքեռ-Զեյթուն	276100	282600	282400
Նոր-Նորք	239000	251800	251300
Ավան	248050	260000	259500
Էրեբունի	241500	249500	249000
Շենգավիթ	245000	255100	255100
Դավթաշեն	267000	275000	275000
Աջափնյակ	235600	248500	248100
Մալաթիա-Սեբաստիա	232100	241800	241300
Նուբարաշեն	142000	153000	152500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. հոկտեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ սեպտեմբերի համեմատ, աճել են 0.1%-ով:

2013թ. հոկտեմբերին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 404 բնակարաններ, որոնց քանակը, 2013թ. սեպտեմբերի համեմատ նվազել է 2.7%-ով, իսկ 2012թ. հոկտեմբերի համեմատ՝ 4.7%-ով:

2013թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հոկտեմբեր 2012թ	հոկտեմբեր 2013թ.	սեպտեմբեր 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	113600	114900	114900
	Ապարան	51050	57000	56700
	Թալին	61200	64850	64500
Արարատ	Արտաշատ	94000	94800	94800
	Մասիս	112000	115000	115000

	Վեդի	97700	99800	99800
	Արարատ	74200	75100	75100
Արմավիր	Վաղարշապատ	153200	154150	154150
	Արմավիր	119100	121200	121200
	Մեծամոր	86500	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99000	99150	99150
	Գավառ	55000	59800	59200
	Մարտունի	107200	107600	107600
	Վարդենիս	39500	44550	44550
	Ճամբարակ	24050	28700	28200
Լոռի	Վանաձոր	87200	88400	88400
	Ստեփանավան	74500	74500	74500
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	53000	55000	55000
	Տաշիր	43800	47150	47150
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	19800	20200	20200
Կոտայք	Աբովյան	153100	155100	155100
	Նոր Հաճն	128500	128600	128600
	Բյուրեղավան	107100	108150	108150
	Եղվարդ	109300	109300	109300
	Հրազդան	60200	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292500	292500
	Չարենցավան	84000	85500	85500
Շիրակ	Գյումրի	108900	109300	109300
	Արթիկ	64800	66500	66500
	Մարալիկ	37300	40500	40300
Սյունիք	Գորիս	115300	121600	121600
	Կապան	90200	92100	92100
	Սիսիան	86000	91150	91150
	Մեղրի	72000	80600	80300
	Ագարակ	43800	46850	46300
	Քաջարան	94300	94650	94650
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	88500	95000	95000
	Եղեգնաձոր	117700	124700	124400
	Ջերմուկ	106000	112500	112050
Տավուշ	Դիլիջան	107800	113150	113150
	Իջևան	116000	118300	118300
	Բերդ	54000	60200	60200
	Նոյեմբերյան	43300	49800	49500
	Այրում	26200	31850	31600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. սեպտեմբերի համեմատ աճել են 0.1%-ով:

2013թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 425 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 98, մարզերում միասին վերցրած՝ 327: 2013թ. հոկտեմբերին, 2013թ. սեպտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 5.8%-ով, ընդ որում Երևանում՝ 19.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 0.9%-ով: 2012թ. հոկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 17.0%-ով, ընդ որում Երևանում՝ 38.4%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 7.4%-ով:

2013թ. հոկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները/դրամ/		
	հոկտեմբեր 2012թ	հոկտեմբեր 2013թ.	սեպտեմբեր 2013թ.
Կենտրոն	467500	476100	476100
Արաբկիր	375000	383000	383000
Քանաքեռ Չեյթուն	286200	295000	295000
Նորք Մարաշ	312500	319200	319200
Ավան	264600	270500	270500
Էրեբունի	232000	239500	239500
Շենգավիթ	249500	255000	255000
Դավթաշեն	267000	276000	276000
Աջափնյակ	242400	250050	250050
Մալաթիա Սեբաստիա	232100	238000	238000
Նուբարաշեն	145100	150500	150500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. հոկտեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. սեպտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

2013թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հոկտեմբեր 2012թ	հոկտեմբեր 2013թ.	սեպտեմբեր 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	134800	136200	136200
	Ապարան	56000	60050	60050
	Թալին	68650	69250	69250
Արարատ	Արտաշատ	98600	100000	100000
	Մասիս	113800	115100	115100
	Վեդի	100200	102300	102300
	Արարատ	87300	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	152300	153100	153100
	Արմավիր	106500	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94200	94800	94800
	Գավառ	53500	57100	57100
	Մարտունի	94300	96100	96100
	Վարդենիս	36000	41000	41000
	Ճամբարակ	27100	31100	31100
Լոռի	Վանաձոր	98200	100000	100000
	Ստեփանավան	88000	90000	90000
	Սպիտակ	113600	114000	114000
	Ալավերդի	48000	50200	50200
	Տաշիր	51100	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000

	Շամլուղ	13200	14000	14000
	Ախթալա	29600	30000	30000
Կոտայք	Աբովյան	154700	157000	157000
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120000	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	80000	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	82500	83000	83000
	Գյումրի	117400	118500	118500
Շիրակ	Արթիկ	62500	63100	63100
	Մարալիկ	49500	52000	52000
	Գորիս	127000	130000	130000
Սյունիք	Կապան	98300	100000	100000
	Սիսիան	90100	96500	96500
	Մեղրի	78800	84500	84500
	Ագարակ	46300	46900	46900
	Դաստակերտ	11610	11610	11610
	Վայք	85400	90050	90050
Վայոց Ձոր	Եղեգնաձոր	114900	116600	116600
	Ջերմուկ	123000	131300	131300
	Դիլիջան	109600	113000	113000
Տավուշ	Իջևան	122000	123200	123200
	Բերդ	59000	60100	60100
	Նոյեմբերյան	46100	48300	48300
	Այրում	34600	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. հոկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. սեպտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2013թ. հոկտեմբերին հանրապետությունում օտարվել են 1332 միավոր /579.26 հա/ հողեր, որից Երևանում՝ 133 միավոր /7.59 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 668 միավոր /621.85 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /0.52 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 456 միավոր /39.27 հա/, որից Երևանում՝ 61 միավոր /2.69 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 187 միավոր /12.95 հա/, որից Երևանում՝ 64 միավոր /3.98 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 13 միավոր /4.05 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /0.40 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 6 միավոր /1.06 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 2 միավոր /0.08 հա/ ընդհանուր մակերեսով:

2013թ. հոկտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1081 միավորի /466.40 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 111 միավոր /5.29 հա/, նվիրատվության գործարքներ՝ 238 միավորի /108.92 հա/, որից Երևանում՝ 19 միավոր /2.20 հա/ և փոխանակության գործարքներ՝ 13 միավորի /3.94 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.10 հա/:

Հանրապետությունում 2013թ. հոկտեմբերին, 2012թ. հոկտեմբերի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 12.0%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական

նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 7.8%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 15.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 7.1%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 152.47 հա, որից 146.44 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 24.1%-ը կամ 261 գործարքներ /65.60 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 65 միավոր /1.99 հա/, իսկ 74.9%-ը կամ 810 միավորը /400.46 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 45 միավոր /3.17 հա/: 2013թ. հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 10 գործարք /0.35 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Ստորև ներկայացվում է 2013թ. հոկտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող															
	Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր			
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/						
Երևան	0	0.00	0	0.00	21	0.14	44	1.85	4	0.52	4	0.40	25	1.48	12	0.76								
Արագածոտն	3	0.80	1	0.19	1	0.003	8	0.39	48	36.58	0	0.00	26	2.61	2	0.07								
Արարատ	16	9.11	0	0.00	7	0.43	2	0.01	71	32.60	0	0.00	44	3.55	4	0.05								
Արմավիր	6	27.87	0	0.00	6	0.65	3	0.03	101	118.58	0	0.00	54	5.29	4	0.06								
Գեղարքունիք	1	0.60	1	0.02	6	0.61	6	0.06	19	35.70	0	0.00	10	1.31	1	0.33								
Լոռի	6	0.72	1	0.09	3	0.02	11	0.28	37	24.00	1	2.00	13	1.15	1	0.002								
Կոտայք	10	5.02	0	0.00	19	0.73	33	0.49	102	53.31	0	0.00	84	7.30	7	4.65								
Շիրակ	0	0.00	0	0.00	4	0.06	2	0.02	47	43.44	1	1.10	17	2.85	2	0.23								
Սյունիք	6	6.46	0	0.00	3	0.25	3	0.03	10	6.74	0	0.00	6	0.88	4	0.04								
Վայոց Ձոր	2	6.19	3	0.11	0	0.00	2	0.75	2	0.39	0	0.00	1	0.05	1	0.01								
Տավուշ	1	0.20	0	0.00	9	0.35	9	0.48	25	9.39	1	0.15	12	2.26	4	0.31								
Ընդամենը	51	56.97	6	0.41	79	3.24	123	4.39	466	361.25	7	3.65	292	28.73	42	6.51								

Ստորև ներկայացվում է 2013թ. հոկտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյուն ար օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	45	0.84	0	0.00	21	0.14	24	0.70	20	1.15	0	0.00	0	0.00	0	0.00	20	1.15
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	13	1.38	3	0.80	1	0.19	1	0.003	8	0.39
Արարատ	2	0.01	0	0.00	0	0.00	2	0.01	23	9.54	16	9.11	0	0.00	7	0.43	0	0.00
Արմավիր	3	0.03	0	0.00	0	0.00	3	0.03	10	27.46	4	26.81	0	0.00	6	0.65	0	0.00
Գեղարքունիք	1	0.002	0	0.00	0	0.00	1	0.002	13	1.29	1	0.60	1	0.02	6	0.61	5	0.06
Լոռի	6	0.04	0	0.00	2	0.01	4	0.03	15	1.07	6	0.72	1	0.09	1	0.01	7	0.25
Կոտայք	1	0.10	0	0.00	1	0.10	0	0.00	59	5.83	8	4.71	0	0.00	18	0.63	33	0.49
Շիրակ	6	0.08	0	0.00	4	0.06	2	0.02	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Սյունիք	5	0.26	0	0.00	3	0.25	2	0.01	6	3.28	5	3.26	0	0.00	0	0.00	1	0.02
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	6	6.68	1	5.82	3	0.11	0	0.00	2	0.75
Տավուշ	1	0.004	0	0.00	0	0.00	1	0.004	18	1.03	1	0.20	0	0.00	9	0.35	8	0.48
Ընդամենը	70	1.37	0	0.00	31	0.56	39	0.81	183	58.71	45	52.03	6	0.41	48	2.68	84	3.59

2013թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 6 գործարք /4.93 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2013թ. հոկտեմբերին, 2012թ. հոկտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 43.4%-ով: Ընդ որում, Երևանում՝ աճել է 2.9 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել է 48.4%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 48.9%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 52.5%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 33.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 40.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. հոկտեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մասվել ազդյուն	Միջին			Նվազագույն	Մասվել ազդյուն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	0.40	104.7	104.7	104.7	30	12.38	365.0	12000.0	3604.5
Ապարան	1	0.20	380.0	380.0	380.0	9	4.81	86.5	2727.3	725.3
Թային	1	0.20	200.0	200.0	200.0	3	4.70	93.6	5494.5	687.5
Ծաղկահովիտ						6	14.69	79.5	1000.0	290.0
Արարատի մարզ										
Արտաշատ	10	2.39	75.9	1575.3	1044.7	35	11.86	335.1	10833.3	2716.0
Մասիս	5	5.72	96.0	601.9	389.7	15	12.96	200.0	11904.8	3051.3
Վեդի	1	1.00	90.4	90.4	90.4	20	7.18	207.0	10795.1	1863.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	2	6.80	70.5	2205.0	1137.7	52	42.60	294.3	9090.0	1268.1
Բաղրամյան	1	20.00	70.9	70.9	70.9	12	18.41	90.6	2561.1	768.5
Վաղարշապատ	1	0.01	1891.9	1891.9	1891.9	32	15.75	444.4	11764.7	2253.3

Գեղարքունիքի մարզ										
Գավառ								199.8	1875.0	430.2
Ճամբարակ						1	10.00	60.5	953.3	355.2
Մարտունի								51.1	2850.0	738.5
Սևան	1	0.60	124.5	124.5	124.5	7	3.97	52.2	2134.8	322.6
Վարդենիս						11	21.73	41.2	2575.1	423.0
Լոռու մարզ										
Վլավերդի	2	0.14	281.4	773.5	527.5	11	5.84	170.4	6424.2	567.5
Գուգարք						13	3.48	234.6	6065.9	780.0
Սպիտակ								250.0	5555.5	730.8
Ստեփանավան	4	0.58	480.7	747.3	607.6	5	3.83	90.6	1686.6	338.0
Տաշիր						7	8.06	45.3	1384.4	164.3
Կոտայքի մարզ										
Աբովյան	4	1.48	100.9	2396.2	781.9	45	17.74	279.3	11942.7	4175.6
Եղվարդ	4	3.23	200.8	200.8	200.8	39	27.23	174.4	11971.8	2466.6
Հրազդան						18	8.33	130.5	10256.4	1515.5
Շիրակի մարզ										
Ախուրյան						18	15.50	252.0	1693.1	630.6
Ամասիա								40.9	261.0	125.5
Անի						16	21.02	110.6	546.9	400.0
Աշոցք								58.5	215.8	130.0
Արթիկ						13	6.92	79.4	1428.6	430.0
Սյունիքի մարզ										
Գորիս						3	3.89	92.6	1023.2	738.0
Կապան	5	3.26	488.3	1785.0	1043.0			120.0	841.6	368.3
Մեղրի						2	0.47	193.0	3000.0	732.7
Սիսիան						5	2.38	46.3	1977.4	560.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						1	0.27	125.0	10000.0	1925.0
Վայք	1	5.82	38.8	38.8	38.8			58.8	1430.7	638.5
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.20	1775.0	1775.0	1775.0	4	0.60	213.3	3783.8	685.5
Իջևան						4	1.66	267.5	9454.5	1245.2
Նոյեմբերյան						17	7.13	46.7	7368.4	900.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. հոկտեմբերին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մտավելագույն	Միջին			Նվազագույն	Մտավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	25.0	3600.0	3600.0	3600.0	19	16928.0	130.7	22200.0	2581.0
Ապարան						3	3320.0	124.1	609.6	390.0
Թալին						2	2452.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						1	2815.0	60.0	214.3	92.0
Արարատի մարզ										
Արտաշատ						9	8741.9	173.9	7140.3	898.0
Մասիս						24	16313.6	187.5	25000.0	1206.0
Վեդի	7	4303.4	645.8	1612.9	843.3	11	10399.5	126.1	5000.0	660.6

Արմավիրի մարզ										
Արմավիր	5	5159.0	316.9	3528.0	959.1	24	27912.4	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան						1	1340.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	1	1375.2	315.0	315.0	315.0	29	23625.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավատ	4	4411.0	268.4	280.2	273.8			186.6	1084.3	683.3
Ճամբարակ						1	1756.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	2	1671.0	113.8	330.0	221.9	5	6325.6	119.3	5000.0	281.4
Սևան						3	2970.0	240.0	3110.4	320.0
Վարդենիս						1	2021.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի						5	5276.0	114.3	1388.9	217.0
Գուգարք	1	75.0	2106.0	2106.0	2106.0	5	2369.3	77.9	14083.3	1258.7
Սպիտակ						2	3150.0	104.9	1348.3	206.5
Ստեփանավան						1	690.0	88.2	1666.7	175.5
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Արուսյան	18	6256.4	638.3	5441.2	3245.4	39	32167.2	264.5	35353.5	1991.0
Եղվարդ						41	36366.4	173.6	27000.0	2857.0
Հրազդան						4	4460.0	117.7	34848.5	1317.2
Շիրակի մարզ										
Ախուրյան						5	6080.0	113.6	18750.0	334.5
Ամասիա						1	4750.0	45.3	274.7	71.0
Անի						2	3570.0	67.9	180.6	176.2
Աշոցք								40.8	144.0	64.0
Արթիկ						9	14063.8	111.8	5000.0	217.7
Սյունիքի մարզ										
Գորիս						3	3621.0	112.2	1700.0	368.0
Կապան						1	670.0	67.9	2638.9	305.2
Մեղրի								68.5	632.9	217.0
Սիսիան						2	4510.0	123.5	875.0	212.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						1	510.0	96.7	7659.6	505.0
Վայք								120.7	1448.3	225.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	478.0	75.8	810.0	120.0
Իջևան	8	3406.7	335.5	3000.0	2138.8	9	20364.6	74.1	14423.1	512.3
Նոյեմբերյան	1	55.0	1650.9	1650.9	1650.9	2	1785.0	125.0	1948.1	230.0

2013թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 661 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.6%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 66.1%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2013թ. հոկտեմբերին, 2013թ. սեպտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 1.2%-ով, իսկ 2012թ. հոկտեմբերի համեմատ նվազել՝ 28.1%-ով:

2013թ. հոկտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 38 բնակարանների, 75 անհատական բնակելի տների, 274 հասարակական, 73 արտադրական նշանակության օբյեկտների, 185 հողերի և 16 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2013թ. հոկտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 9 վարձակալության գործարքների, այդ թվում 3 միավոր /0.08 հա/ կառուցապատման իրավունքով, որոնց քանակը 2013թ. սեպտեմբերի համեմատ նվազել է 10.0%-ով, իսկ 2012թ. հոկտեմբերի համեմատ աճել՝ 3.0 անգամ: 2013թ. հոկտեմբերին հանրապետությունում վարձակալված 328.60 հա հողերից 1.06 հա

վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 327.54 հա հողերից 314.37 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 4.00 հա արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արմավիրի մարզում՝ 146.08 հա, որից 142.57 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. հոկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2274 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.5%ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. սեպտեմբերի համեմատ աճել է 12.1%-ով, իսկ 2012թ. հոկտեմբերի համեմատ՝ 8.8%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /52.0%/, առանձնատների /23.0%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.1%/ և հողերի /8.8%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1275 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. սեպտեմբերի համեմատ աճել է 9.3%-ով, իսկ 2012թ. հոկտեմբերի համեմատ՝ 11.2%-ով:

2013թ. հոկտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 242.02 հա հողեր, որից 3.46 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 97.1%-ը կամ 235.12 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.21 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 146.08 հա, որից 142.57 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. հոկտեմբերին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 167 գործարքներ, որից 122-ը՝ Երևանում: 2013թ. սեպտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը աճել է 3.7%-ով, ընդ որում Երևանում՝ 19.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 23.7%-ով: 2012թ. հոկտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 1.8%-ով, ընդ որում Երևանում՝ 0.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 4.3%-ով:

2013թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1987 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2013թ. սեպտեմբերի համեմատ աճել է 27.6%-ով, իսկ 2012թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 14.9%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 10.9%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /24.9%/:

« Կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե